

տալիս ենթադրելու որ այստեղ ժողով բառը մի ընդհանուր դարձուած է միայն:

Այսպէս թէ այնպէս յիշեալ ճառը զբութուած է Բարսեղեան կարգերով կառավարուող վանականներին յորդորելու համար որ նոքա պահպանեն եղած կարգերը և այս գէպքում էական գաղափարների մասին խօսելիս նորա մէջ մուտք են գտել և նման արտայայտութիւններ, երբեմն իսկ նախադասութիւններ: Զրապեցնող խնդիրներն են այստեղ եղբայրութեան միութիւնը և հաղանդութիւն առ առաջնորդն: Մեծ տեղ է բռնում նաեւ ճգնական կեանքի մասին ընդհանրապէս եղած խորհրդածութիւնն որտեղ արտայայտուած է հեղինակի անձնական հայեացքը վանական կեանքի մասին, որ տարբերուած է և Բարսեղի «Հարցողաց» գրքից և համաձայն է գալիս աւելի նորա անապատից առ Գրիգոր զբած թղթերի ոգուն: Ծառի զբութեան ժամանակի և հանգամանքների մասին աւելի որոշ բան ասելու համար պէտք է խնդիրը կապել ամբողջ Յաւախապատումի քննադատութեան հետ: Մեր նպատակն էր, ինչպէս ասացինք, ցոյց տալ այստեղ միայն նորա Բարսեղի վանական կարգերի հետ ունեցած առնչութիւնը:

Թող ենք տալիս մեզ սակայն հարեանցի աղնարկել, որ ըստ Կորիւնի ա. Մեարոր, ա. Սահակի մահուանից յետոյ՝ խիստ ճգնական վանական կեանք էր վարում—պահօք աղութիւք անձնական օրինակով մերձաւորներին հոգեւոր եռանդ էր ներշնչում, իսկ հեռավորներին թղթերով խրատում յորդորում—«Բազում թուղթս խրատագիրս և զգայացուցիւս ընդ ամենայն դաւառս տաքէր»:^{*}

Պ. Մ.



* Կորիւն 43—44. 1894 թ. Վեկես: Համամանկյան մեոֆի սոկ ունեցել եմք Մ. Արսիս մեոագրասան № 871 գիրք հարցման ա. Բարսեղի եղև. և Յամախ. Վեկես. 1838 թ.:

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ՕՐԹՈՂՈՔՈՒ ԵԿԵՂԵՑԻ.

Ռուսաց մի քանի ազգեցիկ թերթեր ուշադրութեան առնելով այն հանգամանքը, որ Կառավարութիւնը եկեղ. ծխական դպրոցների պահպանութեան համար մէկ և կէս միլիոն ռուբլի նպաստ է շնորհել, աւելի ցանկալի են համարում այդ խոշոր գումարը Լուս. Նախարարութեան ելեմուտքի մէջ մտցնել և քննադատում են եկեղեցական դպրոցների կարեւորութիւնն ու օգուտը: Գարեցական գործը սուս հոգեւորականութեան համար նոքա իբրեւ մի բնու. են ներկայացնում, որ վերջինս ակամայ է իւր վերայ վերցրել և առանձին պատրաստակամութիւն չէ ցոյց տալիս տանելու: Գորա հակառակ Церк. Вѣстникъ թերթը պաշտպան հանդիսանալով եկեղ. ծխական դպրոցների դատին, աշխատում է ցոյց տալ, որ հոգեւորականութիւնը իւր կարողութեան չափով շատ անգամ անձնուիրաբար, գործել է պղպիսի դպրոցների տարածման և բարգաւաճման համար: Յայտնի է, որ Ռուսաստանում երեք տեսակ դպրոցներ կան՝ Նախարարութեան, հասարակական վարչութիւնների և եկեղեցական կառավարութեան հսկողութեան ներքոյ: Այն Նահանգներում, ուր հասարակական վարչութիւններ կան 1893⁹⁴ թ.-ին այդ կարգի բոլոր դպրոցների թիւն էր 13,900 և նոցա մէջ սովորողներն՝ 945,670. Նախարարութեան դպրոցների թիւը 1,078 և սովորողներն 102,387. մինչ նոյն Նահանգներում 1893⁹⁶ թ.-ին 20,289 եկեղեցական դպրոցներ կային, 671,119 սովորողներով, Իսկ այն Նահանգներում, ուր չկան հասարակական վարչութիւններ՝ Նախարարութեան դպրոցների թիւն է 2,498, սովորողներն՝ 157,249. եկեղեցական դպրոցների թիւը 11,786, սովորողներն՝ 378,558. Այսպիսով Նախարարութեան և հասարակական դպրոցները ընդամենը 17,476 են՝ 1,205,256 սովորողներով. եկեղեցական դպրոցները 32,085 և սովորողներ 1,049,677. Յամենայն դէպս մի միլիոնից աւելի մանուկներ սովորում են ուրեմն եկեղեցական դպրոցներում և այդ բաւական է արդէն նոցա կարեւորութիւնն ապացուցանելու համար: Եթէ եկեղեցական իւրաքանչիւր դպրոցում միջին թուով աւելի քիչ սովորողներ կան, քան միւսներում, դորա պատճառը յիշեալ թերթը համարում է այն, որ եկեղ. դպրոցներն աւելի ուշ են յառաջ եկել, երբ արդէն քաղաքներն ու մեծ գիւղերը բռնուած էին և մնում էր փոքր, աղքատ, հեռու ընկած գիւղերում տեղ գտնել: Այդպիսի տեղերում և գործ է

տեսնում՝ քստ մեծի մասին հոգևորականութիւնը, և եկեղ. դպրոցն այն բարերար ազդեցութիւնն է անում, որ միւսներն անել չէին կարող: Սորա առաւելութիւնն աւելի այն բանի մէջ է, որ կրօնի դաստատութեանն ու բարոյական կրթութեան գըլխաւոր տեղը տալով և եկեղեցական կարգերի վարժեցնելով՝ պատրաստում է պետութեան համար բարեխիղճ հաւատարիմ՝ քաղաքացիներ, եկեղեցւոյ համար՝ բարեպաշտ, անձնուէր զաւակներ:

— Վիեփօ-Պեչերեան՝ նշանաւոր վանքի այցելուներից մէկը նկարագրելով այն ծանր տպաւորութիւնը, որ թողնում է վանքի շուրջը լեցուած մուրացկանների բազմութիւնը՝ առաջարկում է նոցա համար առանձին պատասպարաններ կառուցանել և ուխտաւորներին ազատել «ի վաճառ և ի ցոյց տրուած մուրացկանութեան» անտանելի ազմուկից: արհեստական սարսափելի վէրքերի տեսքից: Յիրաւի թէ այս և թէ ուրիշ վանքերում առաւել մուրացկանները խիստ ոգորմելի և միանգամայն զարկելի երևոյթ են ներկայացնում: մինչդեռ յիշեալ յօգուածագրի առաջարկած պատասպարանները հեշտութեամբ դուրս բերել և այդպիսով շատ շարքների առաջն անել կարելի էր: Յայտնի է, որ փողոցային մուրացկանների մէջ ամէնից աւելի ողորմութեան արժանանում է ոչ թէ նա, որ աւելի կարիք ունի, այլ որ ամէնից ծարպիկն է և զիտէ տեղից ու հանգամանքից օգտուելի իրեն ըստ կարելւոյն թշուառ ձևացնել, հասարակութեան գութը շարժելու համար շատերը ոչ միայն խարեւայական, այլ նոյն իսկ եղեռնական միջոցների են դիմում: Չըրջեցնում են իրենց հետ մանուկներ, որոնց զարհուրելի տանջանքներով, յատկապէս այդ նպատակի համար խեղացրել են և քստմնեցուցիչ կերպարանք տուել: Քաղաքաբակիրթ երկրներում այս ամէնն այլ ևս տեղի ունենալ չէ կարող, որովհետև մուրացկանութիւնն իսպառ արգելուած է և իսկական աղքատների ու խեղանդամների համար մեծամեծ բարեգործական հաստատութիւններ կան հիմնուած:

— Ս. Սինօզը մարտի 30-ին կայացած որոշմամբ արգելում է հրապարակական ներկայացումներին այդպէս կոչուած «կենդանի լուսանկարներ» միջոցաւ Փրիւի Աստուածամօր, սուրբերի պատկերներ ցոյց տալ, այն հիման վերայ, որ այդ դէպքում պատկերները խիստ արագ շարժումից դառնում են կենդանի և համարեա թէ գործող անձնաւորութիւններ, և այդպիսով զօրեղ զէպի սրբութիւնն ունեցած բարեպաշտական զգացումը խանգարող՝ տպաւորութիւն յառաջ բերում:

— Մարտի 20-ի բարձրագոյն հրամանով Գուրիայի և Մինգրելիայի եպիսկոպոս Գրիգորի նշանակուում է ս. Սինօզի Մոսկուայի բաժնի անդամ իսկ նորան փոխարինում է Գորուայ եպիսկոպոս

Ալէքսանդր, որի տեղ եպիսկոպոս պէտք է ձեռնադրուէր Տփլիսում ս. Յովհաննէս—Մկրտչի վանքի վանահայր Լէոնիդ վարդապետը:—Այդ ձեռնադրութիւնը տեղի ունեցաւ Սինի մայր տաճարում ապրիլի 18-ին. ձեռնադրողն էր Սրբ. Քլաւիան էկզարխը, Վլադիկավկազի Վլադիմիր, Գուրիայի և Մինգրելիայի Ալէքսանդր և Ալապէրդի Վիսսարիոն եպիսկոպոսների գործակցութեամբ, Տփլիսի համար այդպիսի հազուագէպ մի հանդիսին մեծ բազմութիւն էր ժողովուել, նորոնձայ Լէոնիդ եպիսկոպոսը Վրացի է աղգաւ և Նիկիի հոգևոր ճեմարանն աւարտելուց յետոյ շարունակ գործել է հայրենի երկրում:

Բոլղարիայում հարց է զարթել Ֆերգիանդ իշխանի օրթոդոքս դաւանութիւն ընդունելու մասին, Վերջինս, ինչպէս յայտնի է, 1896 թ.-ին Օրթոդոքս եկեղեցւոյ Տէսով մկրտել տուաւ իւր ժառանգ Բորիս իշխանիկին, Գորանով խախտուած են համարում 1893 թ.-ի Ազգային ժողովի այն որոշումը, որի համաձայն «Յիրող իշխանը պէտք է անպատճառ Օրթոդոքս դաւանութիւն ունենայ, բայց Բոլղարիայի ընտրած իշխանը, եթէ օտար դաւանութիւն ունի, կարող է պահել այդ դաւանութիւնը, ինչպէս իւր, այնպէս և գահի առաջին ժառանգի համար: Բորիսն առաջին ժառանգ էր, ուրեմն նորա մկրտուելով, ասում են, այդ օրէնքը կորցրեց իւր նշանակութիւնը, ուստի պահանջում են, որ նոր ազգային ժողով գումարուի և վերանորոգուի հին, 1879 թ.-ի, օրէնքը, որի համաձայն՝ «Բոլղարիայի իշխանն Օրթոդոքս դաւանութիւն պէտք է ունենայ, բայց առաջին ընտրեալ իշխանը, եթէ մի ուրիշ քրիստոնէական դաւանութիւն ունի, կարող է պահել այն»: Այս գէպքում Ֆերգիանդ հարկադրուած պէտք է լինի արդէն օրթոդոքսութիւն ընդունել, որովհետև նա Բոլղարիայի առաջին իշխանը չէ:

ԿԱՅՈՒՆԻԿ ԵԿԵՂԵՑԻ.

24 մարտի կոմսիստրիայում պապը կարդինալութիւն շնորհեց չորս արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների, որոնցից 3-ը ֆրանսիացիներ են: Նոյն կոմսիստորիայում պապը հաստատել է Անտիոքի յոյն-մեկրիտ ծիսով կաթողիկոսների համար Զիրաջիի արքեպիսկոպոսի ընտրութիւնն ի պատրիարքութիւն, և ճանաչել բազմամիւ արքեպիսկոպոսական և եպիսկոպոսական աթոռների համար այլ և այլ պետութեանց մէջ տեղական իշխանութեան կողմից հաստատած աթոռակալներին: *

* Պիսf k ի Ակաթի ունենալ, որ կարողիկ երկրներում նորընտր եպիսկոպոսներին հաստատում է տեղական

— Երբ պատերազմ՝ հրատարակուեցաւ Սպանիայի և Ամերիկայի մէջ՝ հետաքրքիր խնդիր էր շատերի համար, թէ ի՞նչ դիրք կը բռնէ պապը։ Սպանիոյ թագուհին շտապել էր թէ նորան և թէ Աւստրիոյ կայսեր դիմելու։ Բայց վերջինս անյարմար համարելով ազգակցական կապը քաղաքականութեան հետ շփոթելի լուրը հոգալը պապի վերայ էր թողել։ Նոյն կերպ էր վարուել նաև Ռուսիոյ կառավարութիւնը, որի համակրութիւնը Սպանիոյ կողմն է։ Պապը փորձեց խաղաղութեան միջնորդ լինել։ Բայց յաջողութիւն չունեցաւ։ Նա կը կամենար հարկաւ ամեն կերպ օգնել Սպանիային։ Բայց պէտք է վախենար Ամերիկայում իւր ազդեցութիւնը կորցնելուց։ Ուր նաև ամենամոլեաւոր կաթոլիկները քերտ հայրենասէրներ են։ և մի աչքի ընկնող ցոյց նոցա հայրենիքի դէմ՝ կարող է պատճառ լինել թաժանուելու Հոռոմից և առանձին եկեղեցի կազմելու։ Ամերիկայի կաթոլիկ եկեղեցին առանց այն էլ շատ բանեղով տարբերուում է զուտ պապական եկեղեցուց և նորա անկախութիւն հրատարակելը ժամանակի խնդիր է միայն։ Մի շարք ամերիկացի բարձրաստիճան հոգևորականներ եռանդով գործում են այժմ Հոռոմում յօգուտ իրենց հայրենիքի։

Զարմանալի և միանգամայն քստմնեցուցիչ լուրեր են պատմում այն չարիքների մասին, որ պատերազմի տաղանայի մէջ գտնուող Սպանիային պատճառել են կաթոլիկ կրօնաւորները։ Յիսուսեան կարգը, շնայելով որ 1868 թ.-ից ի վեր արտաքսուած է այս երկրից՝ արդիւնաբերական մեծամեծ ձեռնարկութիւնների տէր է այնտեղ այնուամենայնիւ, որոնց համար տեղացի աշխարհական ներկայացուցիչներ ունի։ Բայց ոչ ոքից ծածուկ չէ, թէ ինքն է իսկական կառավարողը և շահագործողը։ Այդպէս «Անդրատյանտեան» նաւային ընկերութիւնը, որ զօրք է ռազմական մթերք տեղափոխելու մենաշնորհն է վայելում՝ Յիսուսեանների ձեռքին է։ և նոցա ազդեցութիւնն այնքան զօրեղ է կառավարչական շրջաններում, որ մերժեցին մի նշանաւոր նաւատիրոջ առաջարկը՝ զինուորներին առանց վարձի տեղափոխելու։ միւշգրեւ յիշեալ ընկերութիւնը համաժառարար ահազին վարձ է ստանում դորա համար և ամենաողորմելի կերպով կատարում իւր պարտքը։ Սպանիական թերթերը մեղադրում են այդ ընկերութեան վարիչներին, որ նոքա աշխատում են ամեն կերպ նպաստել պատերազմի երկարաձգուելուն՝ շահաւէտ առևտուրից օգտուելու համար։

Նման մեղադրութիւն բարդուում է նաև Պիլիպպեան կղզիներում գործող կրօնաւորների վերայ։

որոնց ուղղակի պատճառ են համարում այնտեղ ծագած ապստամբութեան։ Այդպէս, Սպանիայում ընակուող այդ կղզիների ընակիչների մի խումբ թագուհուն խնդիր է ներկայացրել՝ պահանջելով որ կրօնաւորները դուրս քշուեն այդ կղզիներից, իրրև ապստամբութեան հեղինակների որոնց ներկայութիւնը ապագայում ևս անվերջ դժգոհութեան և խռովութեան առիթ պէտք է լինի։ — Հաստատում են ի միջի այլոց, որ ապստամբութեան մասին առաջին լուր տուողները կաթոլիկ կրօնաւորներ են եղել։ Նոքա են ցոյց տուել, թէ ինչ տներում զէնքեր կան պահուած։ որոնց հետ շատ անգամ գտնուել է դաւադիրների մի ցուցակ՝ վրան ամենահարուստ մարդոց անունները գրած։ այդպիսով մի քանի հազար ընակիչ մահուան պատիժ են կրել, իսկ նոցա կայքը յատկացուել է վանքերին։ միայն մի անգամ գործն այնպէս հապճեպով է կատարուած եղել, որ «դաւադիրները» կարողացել են ապացուցանել զէնքերի գիտմամբ իրենց մօտ բերած լինելը, և ազատուել են։ Ուշագրութեան արժանի է, որ այս ծանր մեղադրանքների համար կողմնակի կերպով վկայ է հանդիսանում նաև կղզիների նախկին կառավարիչ գեներալ Բլանկո, որ իւր վերադարձից յետոյ ապստամբութեան պատճառները բացատրող մի գրուածք է հրատարակել, և նոյնը թագուհուն ներկայացրել։

— Սպանիայից յետոյ ամենաազատ ապարէզը կաթոլիկ կղերի գործունեութեան համար Աւստրիան է։ Ազնուականութիւնն և առհասարակ բարձր դասակարգը իւր կրթութիւնը ստանում է այնտեղ բոտ մեծի մասին Յիսուսեանց կամ նոյա ոգւով առաջնորդուող ուրիշ կրօնաւորական կարգերի դպրոցներում։ Առանձին ուշադրութեան արժանի են ազնուական բարձր կարգերի տիկնայք, որոնց մէջ Յիսուսեանները գործում են գլխաւորապէս «Յիսուսի Սիրտ» տիկնանց ընկերութիւնների օժանդակութեամբ։ փոքր հասակում գաստիարակում են նոցա, մեծանալուց յետոյ ամեն տեսակ միջոցներ են գտնում իրենց շրջանում գրողեցնելու՝ միշտ իրենց ազդեցութեան ներքոյ պահելու համար։ — Անբնի ժամանակ կաթոլիկ եկեղեցին սկսել է Գերմանացիների վերայ իրրև թշնամի տարրի վերայ նայել և ակնյայտի կերպով ձգտում է դարձնել Աւստրիան Սլաւոնական կաթոլիկ պետութիւն՝ հակառակ ողբողական Գերմանիայի, Աղերն ամենուրեք յառաջ է քաշում սլաւոն ժողովուրդներին, գրողում է նոցա ազգայնական ղգացումները և քաղաքականութեան մէջ նոցա կողմն է բռնում։ Բնականաբար քանք չէ խնայում նա միւս կողմից Օրթոդոքս եկեղեցւոյ հեղինակութիւնը ձգելու սլաւոնների աչքում, և ուր ձեռք հասցնել կարող է՝ բոլորին պապական իշխանութեան ներքոյ նուաճելու։

կառավարութիւնը, բայց վերջնական վստեղացումը ձեռքի է ունենում պապի կողմից։ որ կարող է նոցա յաւան առաջել կամ մերժել։

— Թէ որպիսի հմտութեամբ գիտէ կաթոլիկ կղերը գործ յառաջ տանել նաև այնպիսի երկրներում ուր պետութիւնն ամենևին տրամադիր չէ նորա ձգտումները քաջալերելու երևում է Церк. Вѣстникъ № 16 Սարատովի եպիսկոպոսութեան մասին պատմածից։ Այս թեմը է՝ կաթոլիկական թեմն է Ռուսաստանում, որ հաստատուել է 1847 թ.-ին՝ սկզբում՝ Վերստենան անունով, ապա 1852 թ.-ին «Տիրասպոլեան» է դարձել, որովհետև եպիսկոպոսը Տիրասպոլում պէտք է նստէր։ Բայց այդտեղ կաթոլիկաց եկեղեցի և եպիսկոպոսի համար տուն չգտնուելուն պատճառաւ հրաման է ստացուել 1850 թ.-ին, որ Սարատովում կաթոլիկաց ժամանակաւոր դպրանոց բացուի այնտեղի կաթոլիկաց եկեղեցին ժամանակաւորապէս մայր եկեղեցի համարուի և եպիսկոպոսն առժամանակ այնտեղ նստի։ Ռուսաց բարձր շրջաններում պետական եկեղեցւոյ համար վտանգաւոր համարեցին Սարատովի նման մի նշանաւոր կեդրոնի մէջ կաթոլիկ եպիսկոպոսութեան ամբողջ հաստատելը։ Բնիշ Նշանակուեցաւ, որ եղած կասկածներն հաստատեց, և վերջապէս 1858 թ.-ին բարձրագոյն հրաման ելաւ՝ «Ժամանակաւորապէս Սարատով քաղաքում դետեղուած Տիրասպոլի Հռոմէական կաթոլիկ թեմական կառավարութիւնը իւր ամբողջ կազմութեամբ Տիրասպոլ քաղաքը տեղափոխել, Սակայն և այնպէս կաթոլիկ եպիսկոպոսը մինչև այժմ հանգիստ նստած է Սարատովում, ուր 1881 թ.-ին մի նոր փառաւոր մայր եկեղեցի են կառուցել, և նորա հովուած ժողովուրդը, որ 1857 թ.-ին 115,281 հ. էր հաշուում՝ 1897 թ.-ին 302,402 հոգու է հասել։ Ռուս եկեղեցական թերթերն հարցնում են այժմ զայրացած, թէ ի՞նչ գերբնական միջոցներով է տեղի ունեցել արգեօք այդ եռապատկումը, և պահանջում են, որ բարձր հրամանը վերջապէս ի գործ դրուի՝ եպիս. ամբողջ կամ Տիրասպոլ տեղափոխուի կամ իրեն աւելորդ բոլորովին վերացուի։

Կ. Պոլսից հաղորդում են, որ նախարարների խորհուրդը վճռել է արդէն պապի մօտ Ցաճկաց պետութեան ներկայացուցիչ լինելու հարցը, և կարծում են, որ շուտով այդ մասին փոխադարձ համաձայնութիւն կկայանայ։ Այդ հարցը շատ անգամ խօսակցութեան առարկայ է եղել, բայց նորա լուծման արգելք էր լինում միշտ այն հանգամանքը, որ ֆրանսիական պետութիւնը 500 տարիներից ի վեր կաթոլիկների պաշտպան է ճանաչուել արևելքում և մինչև այժմ նորա միջոցով են կատարուել բանակցութիւնները փառիկանի հետ։ Հարց է այժմ՝ ֆրանսիասէր Լևոն ԺԳ. կյօժարի արգեօք վերաւորել ֆրանսիական ժողովուրդի ինքնասիրութիւնը, խլելով նորանից այդ պատուաւոր

միջնորդի դերը։ Իրօք պապն արդէն տարիներէ ի վեր իւր անմիջական ներկայացուցիչն ունի Կ. Պոլսում՝ մի նուիրակ արքեպիսկոպոս, թէև նա ոչ պաշտօնական և կողմնակի կերպով միայն կատարում է այդ դերը։

ՌՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Անգլիա.

Ինչպէս յայտնի է, եպիսկոպոսական եկեղեցւոյ մէջ կենդանի ձգտումն է նկատուում մօտենալու արևել. եկեղեցիներին և, եթէ կարելի է, միութիւն իսկ հաստատելու նոցա հետ։ Այդ նպատակով և ճանապարհորդեց արևելքում անցեալ ամիսներին Սալսբորի եպիսկոպոսը, որ իւր տպաւորութիւնները հրատարակել է այժմ և, զօհուեալութիւն յայտնելով ամեն տեղ իրեն եղած սիրալիր ընդունելութեան համար՝ ասում է ի միջի այլոց, «Ինձ այնպէս է թուում, որ չեմ սխալուում ասելով, թէ արևել. եկեղեցւոյ վարիչները համարում են անգլիկան համայնքը ամենամերձաւորը բոլոր նորանից բաժանուած համայնքների մէջ՝ ինչպէս եկեղեցական վարչութեան բնաւորութեան, այնպէս և ձգտումների ուղղութեան կողմից։ Մենք հաւատար յարգանքով ենք վերաբերուում դէպի ազգայնութիւնը, ինչպէս դէպի Աստուծոյ հաստատած մի տարր քրիստոնէութեան մէջ. ունենք նոյն սէրը դէպի ս. Գիրքը և ցանկութիւն ազատօրէն կարգալու և տարածելու ժողովրդական լեզուով, Աստարեւապէս համոզուեցայ ես այդ բանին իմ ճանապարհորդութեան միջոցին, Երկու ուրիշ գործնական խորհրդածութիւններ աւելի հեշտացնում են մեր փոխադարձ յարաբերութիւնը, այն է՝ որ Արևել. եկեղեցին մեզ հետ հաւասար մերժում է պապի գլխաւորութիւնը և նման պատճառներ ունի երկիւղ կրելու պապական աշխարհակալութիւնից, և որ ծխական հոգեւորականները ամուսնական կեանք են վարում։ Ընդհանրապէս առած, Արևել. եկեղեցւոյ աւանդութիւնները և կարգապահութեան ու խորհուրդների մասին ունեցած հայեացքներն աւելի հին են և աւելի քիչ սքոլաստիքական միջնադարեան նորմաւորութիւններ ունին իրենց մէջ, քան Հռոմէական եկեղեցւոյ աւանդութիւններն ու հայեացքները։ Այդ հանգամանքն անկասկած կրկնակի նշանակութիւն ունի։ Յարգանք ազգելով մեզ դէպի խորին հնութիւնը և ընծայելով յունական եկեղեցւոյ պաշտամունքին ու վարդապետութեան խիստ պարզ բնաւորութիւն՝ միևնոյն ժամանակ գրեթէ անդրապահանդաւորական հոգի է ներշնչում նա այդ եկեղեցւոյ անդամներին, որ նոցանից շատերին ստիպում է մեր աշխուրդ երկրորդական երևեցած հաւատալիքների և կարգերի մեծ նշանակութիւն տալ։ — Ապա անգլիկան ե-

պիսկոպոսը թուում է այն արգելքները որոնք դեռ երկար ժամանակ կհանգարեն եկեղեցիների միութիւնը և այնուամենայնիւ մեծ յոյս է յայտնում որ այդ միութիւնը կիրականանայ երբեքէ որովհետեւ համաձայնութեան կէտերն աւելի շատ են նոցա մէջ քան հակառակութեան: Թամենայն դէպս կարելի և կարեւոր է համարում նա որ այդ եկեղեցիներն այժմ ևս համերաշխ գործեն այնպիսի ծանրակշիռ և զաւանական վէճերից բարձր խնդիրներում որպիսիք են քրիստոնէական բարեգործութիւնն ու լուսաւորութիւնը:

— Եպիսկոպոսականների մանաւանդ «Բարձր եկեղեցի» կոչուած կուսակցութեան դէպի հին եկեղեցիները ցոյց տուած ձգտման և ներքին գծողութեան մի արտայայտութիւն ևս այն է որ շատ տեղեր աշխատում են ծխակատարութիւնը ճոխացնել՝ գործածութեան մէջ են մտցնում Աստուածամօր պատկեր խաչ, մոմ, խուկ—և դոցա համապատասխան պաշտամունք: Այդ փոփոխութիւնները շատ անգամ ընդդիմութիւն են գտնում ծխականների՝ և սովորաբար պաշտպանութիւն հոգեւոր իշխանութեան կողմից: Նորերս այս առթիւ մի քանի անկարգութիւններ տեղի ունեցան: Այդպէս, Լոնդոնի եկեղեցիներից մէկում աւագ ուրբաթ օր սեղանի վերայ խաչ էր դրած, որին երկրպագութիւն մատուցին և համարեցին հոգեւորականները: Իսկ երբ կարգը ժողովրդին եկաւ՝ Վենզիտ անունով մի պարոն վերցրեց խաչը սեղանի վերայից և բացականչեց. «Աստուծոյ անունով բողոքում եմ ես այս կոապաշտութեան դէմ» Անգլիայի եկեղեցւոյ մէջ. Աստուած իմ, օգնիր ինձ: Բնականաբար մեծ աղմուկ յառաջացաւ և բողոքարկու պարոնին կալանաւորեցին ու մի շարաթուայ բանտարկութեան դատապարտեցին, իրրեւ հասարակաց կարգը խանգարողի:

— Նման ձգտումներ արտայայտութիւն են գտնում նաև ներքին հասարակական խնդիրներում: Ուշադրութեան արժանի է օրինակ «Բարձր» և «Ստորին» եկեղեցիների վերաբերումը դէպի առաջնակարգ կարեւորութիւն ունեցող դպրոցական խնդիրը: Անգղիայում երկու տեսակ դպրոցներ կան՝ ազատ և կամ զանազան հիմնարկութեանց կամաւոր տուրքերով պահպանուող և քաղաքական դպրոցներ: Խնդիրը վերջին տեսակի մասին է որի վերայ թէև Եպիսկոպոսական եկեղեցին ոչ մի անմիջական ազդեցութիւն չունի, բայց կարող է կողմնակի կերպով ազդել և ուղղութիւն տալ, եթէ յաջողի իւրաքանչիւր քաղաքի կողմից երեք տարին մի անգամ ընտրուող վարչութեան անդամներին իւր կողմնակիցներից ընտրել տալ: Սղքա երկու կուսակցութիւնների են բաժանուում՝ չափաւոր և յառաջադիմական: Առաջինները պահանջում են որ դպրոցում կրօն ուսուցանուի ոչ թէ հոգեւորա-

կանների այլ սովորական ուսուցիչների միջոցաւ և ուսուցման առարկան լինի ոչ թէ այս կամ այն դաւանութիւնը, այլ բոլոր դաւանութիւնների համար ընդհանուր՝ բուն քրիստոնէական սկզբունքները: Վերջինները կամենում են՝ նախ բոլոր դպրոցները խղափարել դարձնել և ապա կրօնի ուսուցումը հանել բոլորովին դպրոցից և մասնաւորների հոգացողութեան լծողելը:— Արդ, մինչ «Ստորին» եկեղեցին չափաւոր կուսակցութեան համակիր է՝ «Բարձր» եկեղեցին ընդհակառակն կողմնակից է յառաջագիմականների պաշտպանելով միանգամայն կոմունոր դպրոցները, որովհետեւ նա չի կարող գոհ լինել այն ընդհանուր անգղից քրիստոնէութեան ուսուցմամբ, այլ ցանկանում է որ կրօնը դպրոցից անջատելով՝ դիւրութիւններ տան դուրսն առանձին հոգեւորականների միջոցաւ աւանդելու: Թէև այս նկատմամբ եղած մի քանի փորձերն անյաջող ելք են ունեցել, բայց «Բարձր» եկեղեցին գոհ է այնուամենայնիւ որ անցեալ տարուայ վերջերին կատարուած ընտրութեանց մէջ յառաջադիմականները ձայների անհամեմատ առաւելութիւն ստացան: Սպասուում է ուրեմն այժմ, որ կրօնի ուսուցումը դպրոցական առարկաների շարքից կհանուի և «Բարձր» եկեղեցին աշխատում է որ ցանկացած դիւրութիւններն ընդարձակ չափով տրուին և օրինական ոյժ ստանան:

— Հետաքրքրական են վերջերս հրատարակուած ինչ ինչ ստատիստիքական տեղեկութիւններ՝ Անգլիկան եկեղեցւոյ դիրքի և գործունէութեան մասին գաղափար տալու համար: Անգլիոյ 34 եպիսկոպոսների մէջ ապրում է 29,115,367 հ. ժողովուրդ: Հոգեւորականների թիւն է՝ 13,872. տարեկան մկրտութիւնների թիւը՝ (ա) մանուկներ՝ 573,194. (բ) հասակաւորներ՝ 12,149. հաղորդութիւն ընդունողները ընդհանուր հաշուով մօտաւորապէս 1,886,059. Այն եկեղեցիները, որ ամեն օր բաց են և ուր ժամասացութիւն է լինում՝ 4117 են. այն եկեղեցիները, որ միայն առանձնական աղօթքի համար են բաց հասարակ օրերը՝ 6,090. Կիւրակներօրեայ դպրոց յաճախում են ա) փոքր մանուկներ՝ 636,357. ի) տղայք՝ 820,641. զ) աղջիկներ՝ 836,374. Կիւրակներօրեայ դպրոցի ուսուցիչների թիւն է՝ 58,022. ուսուցչուհիներին՝ 148,137. Հոգեւորականութեան ընդհանուր եկամուտն է մօտ 33 միլիոն բուրլի. եկեղեցական բարեգործութեանց համար տարեկան կամաւոր նուէրների գումարը մօտ 50 միլիոն բուրլի: Անգլիոյ եկեղեցին 1896 թ.-ին ունեցել է այլ և այլ եկեղեցական ընկերութիւնների և բարեգործական հաստատութիւնների համար 13 միլիոն՝ ձըլական այլ և այլ պէտքերի և դպրոցների պահպանութեան համար մօտ 50 միլիոն բուրլի ծախք:

Հակառակ պետական եկեղեցւոյ այսպիսի և

աանդուն և ընդարձակ գործունէութեան, թէ որչափ յառաջագիմութիւն են արեւլ այնուամենայնիւ ազատ եկեղեցիներն ի հաշիւ նորա՝ յայտնի երեւց սոցա ներկայացուցիչների մարտի 7—10-ին Բրիտտուում գումարած ընդհանուր ժողովից: Ազատ եկեղեցւոյ դաշնակցութիւնը՝ միայն հինգ տարի է ինչ գոյութիւն ունի. և արդէն մեծ ծաւալ է ստացել և մեծ հեղինակութիւն ձեռք բերել: Բրիտտուում 500 տեղական ժողովներից պատգամաւորներ կային, որոնց թիւը մինչև 700-ի էր հասնում: Արծնական եռանդի և քրիստոնէական զգացումների կենդանութեան կողմից ազատ եկեղեցիների գերակշռող լինելը ցոյց տալու համար բաւական է յիշել, որ 1897 թ.-ին հաղորդութիւն ընդունողների թիւն այստեղ եղել է 16,625,152, մինչ պետական եկեղեցւոյ մէջ 3,122,526 միայն: Աւերջին ժամանակ նոցա մէջ տեղի ունեցած փոխադարձ յարաբերութեանց մասին խօսեց ժողովի նախագահ Հիւյ Պրայս Հիւս. Իսկ նախկին նախագահ անուանի Վլիֆֆօդ «եկեղեցիների միութեան» մասին խօսելով՝ այդ դադափարի իրականացումը նորանում է տեսնում: որ բոլորն ընդհանուր ուժով աշխատեն իրենց Աստուծուն կորցրած մարդոց կրկին գտնելու և Քրիստոսի ի հնազանդութիւն բերելու: Այնուհետև ճառեր եղան Պրանսիոյ բողոքականների և կաթոլիկ եկեղեցւոյ կողմից նոցա կրած հալածանքի: Ամերիկայում ազատ եկեղեցիների դաշնակցութիւն կազմելու կարիքի, ժողովրդական բարոյականութեան և դորա վերայ գործ դրուած աշխատանքի և այլ կարևոր խնդիրների մասին: Արդունցաւ յաջորդ ընդհ. ժողովը գումարել Լիվերպուլում 1899 մարտ 14—16-ին:

Թիւրիմացութիւնների ենթ հանդիպում եւ մեզ հակառակ մտածողների աւելի մեծ շրջանի հետ զործ ունինք: Եղած քահանաներին թէեւ ամէնքը պախարակում են եւ իրենց կոչման անյարմար գտնում: Ըայց գոնէ մեծամասնութիւնը լաւերի պէտքն զգում է եւ խոստովանում: կրօնաւորների նկատմամբ ընդհակառակն նաեւ քահանայական հարցի պաշտպաններից շատերը, ինչպէս երեւաց վերջին ժամանակի լրագրական վէճերից, ինչպէս երեւում է Պօլսոյ մամուլի մէջ լոյս տեսնող մի շարք յօդուածներից՝ այն կարծիքին են, որ նորա անզգայ, ժողովրդից կտրուած, ժողովրդի պէտքերին անձանօթ, եւ ոչինչ քանով գոհացում՝ չտուող, ուրեմն եւ առհասարակ անպէտք եւ ծրիակեր մի դասակարգ են կազմում: Այս դէպքում եւս միակ ուրախալի երեւոյթն այն էր: որ պ. Լ. Սարգսեանի պէս ազատ խորհողների շրջանին պատկանող մի անձն հակառակ ելաւ այդ կարծիքին եւ մի շարք լուրջ խորհրդածութիւններ արաւ. ուրախալի մանաւանդ նորա համար: որ մեզանում՝ անագին քանակութեամբ մարդիկ խօսքի ճշմարիտ եւ ուշադրութեան արժանի լինելը այն ժամանակ են միայն ընդունում: երբ ասողն իրենց հաւանած մարդն է. այդպիսիների վերայ, յոյս ունինք, քաղերար ազդեցութիւն ունեցաւ Պ. Սարգսեանի լուրջ յօդուածը, չնայած որ պ. յօդուածագիրն, ի միջի այլոց, հոգեւորականութեան թշնամի տարրերից մէկն է համարում՝ աստուածաբանութիւնը, երեւի խիստ մոթ եւ սարսափելի քաներ երեւակայելով այդ անուան ներքոյ:

Պ. Սարգսեան շօշափել է այն երկու էական կէտերը, որոնք կրօնաւորութեան խնդրի մէջ ամէնեց աւելի աչքի են ընկնում: եւ երկու դէպքում եւս ուղիղ որոշումն է տուել. նա հերքում է այն անտեղի զրոյցը, թէ հայ կրօնաւորները կտրուած են ժողովրդից, եւ հաստատում, որ աշխարհից կտրուած եւ ընտանեկան հոգսերից ազատ լինելը մեծապէս նպաստել կարող է գաղափարական նըպատակների ծառայելուն: Սակայն այս առարկութիւններն աւելի լաւ ըմբռնելու եւ նոցա ճշմարտութեանը համոզուելու համար պէտք է աւելի պարզ գաղափար ունենալ վա-



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԿՐԾՆԱԻՈՐՆԵՐ ՊԵՏԸ ԵՆ.

Արարատի նախընթաց համարում ի նըկատի ունեցանք հոգեւորականութիւնն ընդհանրապէս եւ աշխատեցինք նոցա պատրաստութեան եղանակի մասին եղած թիւրիմացութիւնները փարատել: Մասնաւորելով այժմ մեր խօսքը կրօնաւորների համար պիտի տեսնենք, որ կրկին ոչ նուագ